

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՅԱԶ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Մանյակ Երանոսյան

ՀԱԿՈՒ ՉԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Հիմնաբառեր. Հ. Չավրիյան, գաղթական, Երպրուժի շրջան, ռուսական իշխանություններ, բարեգործական կազմակերպություններ, կուսակցություններ, վերաքնակեցում, Հայկական կոմիտե:

Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության պատմության խնդիրների համակարգում կարևոր նշանակություն ունեն Կովկասյան ռուս-թուրքական ռազմաճակատում ռուսական բանակի կողմից գրավված հայապատկան տարածքներում ռուսական իշխանությունների վարած քաղաքականության, հայ բնակչության, գաղթականների տեղավորման, օգնության ցուցաբերման, այդ գործում հայկական, ռուսական, ամերիկյան և այլ հասարակական, հոգևոր ու քաղաքական կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անհատների գործունեության պատմության վերհանման ու ներկայացման հարցերը:

Հայ բնակչության դրության բարելավման ուղղությամբ ակտիվ գործունեություն էին ծավալում նաև ազգային կուսակցությունները: Այս առումով պատահական չէ, որ նրանց մի շարք ղեկավար գործիչներ՝ որպես տարբեր հայկական, համառուսաստանյան-ռուսական հասարակական, բարեգործական, գաղթականախնամ կազմակերպությունների ներկայացուցիչներ, անցնում էին Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրեր, կազմակերպում հայ բնակչությանը օգնություն տրամադրելու, բնակավայրերը վերաշինելու, նրանց համար կենսական նշանակություն ունեցող խնդիրները կարգավորելու և իրավունքները պաշտպանելու գործը:

Խնդրո առարկա ժամանակահատվածում, ի թիվս այլոց, Արևմտյան Հայաստանում արդյունավետ գործունեություն է ծավալել Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցիկ անդամներից բժիշկ Հակոբ Չավրիյանը: Երգրուժի շրջանի հայերի, հայ գաղթականների տեղավորման, նրանց կացության բարելավման ուղղությամբ 1916 թ. հոկտիսի վերջից մինչև սեպտեմբերի սկզբները ընդգրկող նրա գործունեության վերհանումն էլ հանդիսանում է այս հոդվածի նպատակը¹:

Նշենք, որ խորհրդային, այդ թվում՝ խորհրդահայ պատմագրությունը, վերը հիշատակված խնդիրներին, ինչպես և Առաջին աշխարհամարտի պատմությանն ընդհանրապես, մեծ ուշադրություն չի դարձրել: Կուրսկի մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Ա. Կուրցևը դա բացատրում է մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը ցարական կառավարության և այնուհետև 1918-1925 թվականներին գաղթականների հայրենիք վերադառնալուց հետո խորհրդային իշխանության կողմից նրանց ցուցաբերած օգնության, ինչպես նաև Երկրորդ աշխարհամարտի ժամանակ զանգվածային տարհանման ենթարկված բնակչության պայմանների համեմատության բոլշևիկների համար աննպաստ, ոչ շահավետ լինելու հանգամանքով²: Ընդհանուր առմամբ համաձայնելով այս տեսակետին, հավե-

* Հոդվածը ներկայացվել է 13.09.2020 թ., գրախոսվել՝ 02.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Նշենք, որ ավելի վաղ Երպրուժի շրջանում Հ. Չավրիյանի գործունեության վերաբերյալ հրատարակել ենք մի շարք փաստաթղթեր, իսկ սույն հոդվածում փորձել ենք այդ և այլ փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ի մի բերել Հ. Չավրիյանի Երպրուժյան գործունեության պատմությունը: Տե՛ս «Փաստաթղթեր Երպրուժում Հակոբ Չավրիյանի գործունեության մասին (1916)», կապմող՝ Մ. Երանոսյան, «Բանբեր հայագիտության», Ե., 2016, № 1, (այսուհետև՝ Փաստաթղթեր Հ. Չավրիյանի):

² Տե՛ս Курцев А. Н., Беженцы первой мировой войны в России,

լենք, որ 20-րդ դարի երկրորդ կեսից Հայոց ցեղասպանության հարցի վերհանման, արդիականացման պայմաններում խորհրդահայ պատմաբանները, այնուամենայնիվ, ստիպված էին որոշակիորեն անդրադառնալ նաև այդ հարցերին: Մասնավորապես պատմաբաններ Ջ. Կիրակոսյանը և Մ. Արզումանյանը իրենց աշխատություններում համառոտ անդրադարձել են ցարական իշխանությունների կողմից հայ գաղթականների նկատմամբ դրսևորած բացասական վերաբերմունքին¹, խոսել գաղթականների տեղավորման ու օգնության գործով զբաղվող կազմակերպությունների և այլ հարցերի մասին²:

Հիշատակված ինդիքների նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է խորհրդային Միության գոյության վերջին տարիներին և, հատկապես, հետխորհրդային շրջանում: Այս փուլում մի շարք պատմաբաններ լուսաբանում են ռուսական բանակի կողմից գրավված հայկական տարածքների (Վան, Տարոն, Խնուս, Էրզրում և այլն) հայ բնակչության, գաղթականների սոցիալ-տնտեսական, քաղաքական դրության, իրավական կարգավիճակի և այլ հարցեր³: Ընդ որում, եթե նյութերի առատությամբ պայմանավորված նրանք հանգամանալից ներկայացնում են Վանի շրջանի հայերի դրությունը, ապա Էրզրումի ու մասնավորապես այնտեղ Հ. Չավրիյանի գործունեության պարագայում նման անդրադարձումները սակավաթիվ են:

Այդպիսի ուսումնասիրողներից շահեկանորեն առանձնանում են Ա. Հարությունյանը և Ռ. Սահակյանը: Առաջինն իր աշխատանքներում ներկայացրել է Էրզրումի գրավումից հետո քաղաքում ստեղծված ծանր դրությունը, անդրադարձել ողջ մնացած հայերին, հայ գաղթականներին տեղավորելու ու տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից նրանց օգնություն ցուցաբերելու հարցերին: Բայց Հակոբ Չավրիյանի գործունեությունը Ա. Հարությունյանը ուսումնասիրության առարկա չի դարձրել: Նրա աշխատանքներում Հ. Չավրիյանի անունը հիշատակվում է միայն կապված հայ գաղթականական կոմիտեի գործունեության հետ⁴:

Պատմաբան Ռ. Սահակյանի աշխատանքներում իրավիճակն այլ է: Վերջինս իր ատենախոսության, ապա դրա հիմամբ տպագրված մենագրության՝ Էրզրումի շրջանին նվիրված հատվածում մի շարք դրվագներով անդրադառնում է Հ. Չավրիյանի գործունեությանը, մասնավորապես, նրա կողմից գյուղացիների համար հրահանգի մշակմանը, հայ բնակչությանը ազատ գյուղերում տեղավորելու վերաբերյալ ռուսական իշխանությունների կողմից թույլտվության ստացմանը, Էրզրումի հայերի գույքին և այլն⁵: Բայց Ռ. Սահակյանի մենագրության մեջ Հ. Չավրիյանի գործունեությունը լուսաբանվում է հատվածական կերպով, ընդ

http://historical-articles.blogspot.com/2011/10/blog-post_06.html, c. 1 (21.05.2012).

¹ Տե՛ս Կիրակոսյան Ջ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Ե., 1967, էջ 466:

² Տե՛ս Արզումանյան Մ., *Հայաստան 1914-1917*, Ե., 1969, էջ 479-480:

³ Տե՛ս Հարությունյան Ա., *Առաջին համաշխարհային պատերազմը և հայ գաղթականները, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն*, Ե., 1989; *Նույնի՝ Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին*, «Էջմիածին», Դ տարի, 2007, էջ 59-77; *Դանիելյան Է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (Չարժը, կացությունը, թվակազմը)*, Ե., 1996, *պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն*; *Նույնի՝ Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (Չարժը, կացությունը, թվակազմը)*, Ե., 2017; *Ստեփանյանց Ս., Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությունը առաջին աշխարհամարտի տարիներին 1914-1918 թթ., պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն*, Ե., 2013; *Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար*, Ե., 2015:

⁴ Տե՛ս Հարությունյան Ա., *Առաջին համաշխարհային պատերազմը և հայ գաղթականները, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն*, էջ 141; *Նույնի՝ Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին*, «Էջմիածին», Էջմիածին, 2007, Դ տարի, էջ 60:

⁵ Տե՛ս Սահակյան Ռ., *Նշվ. աշխ.*, 313-319, 324-325: *Հավելվենք, որ Ռ. Սահակյանի օգտագործած նամակներից մեկի հասցեատիրոջ և դրանում ներկայացված իրադարձությունների ժամանակի հարցում մենք փոքր-*

որում՝ որոշակի շեշտադրումներով առավելություն է տրվում Ռոստոմի դերին, այնինչ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ շրջանի հայերի համար դրական նշանակություն ունեցած կարևոր որոշումները ընդունվել են Հ. Չավրիյանի՝ Երզրումում գտնվելու ժամանակ և նրա ջանքերի շնորհիվ: Հիմնականում նշված պատճառներով, կարծում ենք, որ Երզրումում Հ. Չավրիյանի գործունեությունը համակարգված կերպով ներկայացվելու և գնահատվելու կարիք ունի:

Մինչև Առաջին աշխարհամարտը Երզրումի վիլայեթի բնակչության 1/3-ից ավելին՝ 220 հազարը, հայեր էին¹: Նրանք նշանակալի դեր էին կատարում վիլայեթի տնտեսական, մշակութային կյանքում, ունեին բազմաթիվ կրթական, կրոնական հաստատություններ: Երզրումի վիլայեթի հայերը վերահսկել են ներքին առևտրի 80 %-ը, մեծ դերակատարություն ունեցել արտաքին առևտրում²:

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանությունը աղետալի հետևանքներ է ունենում Երզրումի հայերի համար:

1916 թ. փետրվարի սկզբին ռուսական բանակի կողմից ռազմավարական նշանակություն ունեցող Երզրումի գրավումից հետո ստեղծվում է նոր իրադրություն: Երզրումի շրջանի որոշ թվով հայեր, ովքեր թաքնվելով լեռներում կամ իրենց ծանոթ բողոքի մոտ՝ կարողացել էին փրկվել, աստիճանաբար սկսում են վերադառնալ³: Բնականաբար ծայրահեղ թշվառ վիճակում գտնվող այդ հայերին հարկավոր էր անհետաձգելի օգնություն ցուցաբերել:

Երզրումի գրավմանը հաջորդած ամիսներին (մինչև հուլիս ամիսը) գաղթականների աջակցության հարցերով առավել ակտիվորեն զբաղվում էր Համառուսաստանյան քաղաքների միությունը, որը բացում էր սննդատու կայաններ, թեյարան, բաղնիք, ինչպես նաև

ինչ այլ մոտեցում ունենք: Մասնավորապես, մեր կարծիքով, Ռ. Սահակյանի կողմից Հ. Չավրիյանի՝ Ռոստոմին ուղղված 1916 թ. սեպտեմբերի 10-ի նամակը (տե՛ս Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 313), իրականում հասցեագրված է եղել ոչ թե Ռոստոմին, այլ Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Ստեփան Գրիգորի Մամիկոնյանին: Թերևս, շփոթմունքի առիթ է տվել այն, որ նամակը ուղղված է Ստեփան Գրիգորին (ռուսերեն Степан Григорьевич), իսկ և՛ Ռոստոմը, և՛ Մամիկոնյանը ունեցել են նույն անունն ու հայրանունը: Կարծում ենք՝ նամակում առկա որոշ տեղեկություններ հուշում են, որ խոսքը Ս. Մամիկոնյանի մասին է: Այսպես՝ Հ. Չավրիյանն այլ նամակում Ռոստոմին դիմում է անունով և որպես ընկեր (տե՛ս Փաստաթղթեր Հ. Չավրիյանի, էջ 235-240), այնինչ այդ նամակը պաշտոնական ոճով է գրված, և Հ. Չավրիյանը նամակի հասցեատիրոջը դիմում է «Դուք», «Ձեր» ձևերով: Երկրորդ՝ 1916 թ. մարտ ամսից հիմնականում Երզրումի վիլայեթի տարածքում գտնվող և իրերի դրության մասին լավագույնս տեղեկացված Ռոստոմին Հ. Չավրիյանը կարիք չէր ունենա սկզբից մինչև սեպտեմբեր ամիսը ընկած ժամանակաշրջանի մասին ընդհանուր տեղեկություններ ներկայացնել և վերջապես՝ նամակը Թիֆլիսից ուղարկվել է Ն. Ադոնցի միջոցով, ով 1916 թ. աշնանը մեկնել է Ռուսաստանի կենտրոնական շրջաններ (տե՛ս Հովհաննիսյան Պ., Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակներից, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 1988, № 3, էջ 96; Նիկողայոս Ադոնց, Երկեր, հ. Ե, Ե., 2014, էջ 85):

¹ Տե՛ս «Армянский вестник», М., 1916, № 23, 3 июля, с. 4.

² Տե՛ս Кеворкян Р., Геноцид армян, полная история, М., 2015, с. 350. Ըստ Ռ. Գևորգյանի ուսումնասիրության՝ ցեղասպանության հետևանքով հայերի թողած հարստությունը կազմել է 17.503.000 թուրքական լիրա (տե՛ս նույն էջում):

³ Մոտավոր տվյալներով պատերազմի նախօրեին երկու տասնյակ հազար հայ բնակչություն ունեցող Երզրումի հայերից, մի քանի տեղեկությունների համադրությամբ, ողջ էին մնացել շուրջ 200 հայ, որոնց փոքր մասին թաքցրել էին թուրք ընտանիքները, իսկ մնացածը կենդանի էին մնացել ԱՄՆ միսիոներների ու, մասնավորապես, Ստեպլտոնի ջանքերով (տե՛ս Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 298; «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան և ուրիշներ, Ե., 2004, (այսուհետև՝ Համահայկական խորհրդակցություններ), էջ 89; Барбс А., В стране ужаса. Мученица Армения, М., 2008, с. 18: Ըստ Սարիղամիշի ավանի հոգևոր հովիվ Տաճատ քահանա Տեր-Վարդանյանի՝ կաթողիկոսին ուղղված նամակի՝ Երզրում են վերադարձել երեք խումբ փրկված հայեր. առաջինը 56 հոգի, փետրվարի 12-ին, երկրորդը՝ 47 հոգի, նույն ամսի 28-ին, իսկ երրորդը՝ 16 հոգի մարտի 3-ին: Մինչ այդ նրանք ապրել էին մահմեդականների ընտանիքներում: Նրա տեղեկությունների համաձայն՝ բացի մինչ այդ եկածները Կարինում դեռ բավական թվով փախստականներ են առկա եղել և շարունակել են շրջակայքից գալ ու ավելանալ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 110, թ. 7-7 շրջ.): Հ. Չավրիյանի Երզրում ժամանելու պահին, այսինքն՝ հուլիսի վերջին, Երզրումի շրջան վերադարձած գաղթականների թիվը քաղաքում հասնում էր 700-ի, իսկ Երզնկայում և Դերսիմում, հետախույզների հաղորդած տեղեկությունների համաձայն, 3-4 հազարի:

գբաղվում քաղաքի սանիտարական վիճակի բարելավմամբ¹: Արդյունքում, արդեն մայիսի կեսերին Երզրումի շրջանի սանիտարական վիճակը բավարար էր գնահատվում²:

Այդուհանդերձ, հայ բնակչության դրությունը շարունակում էր աննախանձելի մնալ: Հայերի համար հատկապես ցավալի էր ռուսական իշխանությունների վարած քաղաքականությունն ու հարուցած խոչընդոտները. քաղաք հայերի մուտքի արգելում, տեղի թուրքերին հովանավորում և այլն³:

Իրավիճակը էապես չի փոխվում նաև ՀՅԴ ազդեցիկ գործիչ Ռոստոմի՝ Երզրում գալուց հետո⁴: Երկրամասում հայ բնակչության, գաղթականության առջև ծառայած մի շարք կենսական նշանակություն ունեցող խնդիրներ լուծում չէին ստանում, ուստի այնտեղ Է գործուղվում Եվրոպայից նոր Թիֆլիս վերադարձած Հակոբ Չավրիյանը⁵: Փոխարքայության կենտրոնում ծանոթանալով Երզրումում հայերի համար ստեղծված դժվարին կացությանը՝ նա որոշում է մեկնել այնտեղ⁶: Ամիսներ անց Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Ստեփան Մամիկոնյանին գրած նամակում Հ. Չավրիյանը 1916 թ. հուլիսի վերջին իր՝ Երզրում մեկնելը բացատրում էր Դերսիմից հայ գաղթականների նոր ալիքների հայտնվելու, գյուղերում գյուղացի գաղթականների հաստատվելու, իսկ քաղաքացիների՝ Երզրումում արհեստներով ու առևտրով զբաղվելու հարցերում տեղական վարչակազմի հարուցած խոչընդոտները և արգելքները վերացնելու, հայերի նկատմամբ ռուսական իշխանությունների թշնամական վերաբերմունքը մեղմելու, հայերի իրավունքներն ու շահերը նրանց մոտ ներկայացնելու և պաշտպանելու, ինչպես նաև գաղթականների ձմեռումն ապահովող ծրագիր կազմելու անհրաժեշտությամբ⁷:

Ակնհայտ է, որ առկա խնդիրների զգալի մասը պայմանավորված էին ռուսական բանակի հրամանատարության և ընդհանրապես ռուսական իշխանությունների թշնամական վերաբերմունքով ու հակահայ քաղաքականությամբ: Վերջինս իր հերթին պայմանավորված էր հայերի ցանկությունների, ձգտումների և ռուսական կայսրության ծավալապաշտական նպատակների միջև առկա հակադրությամբ: Բանն այն է, որ ռուսական կողմը մտավախություն ուներ, որ պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում գրաված տարածքների յուրացման հարցում կարող էին դժվարություններ առաջանալ, քանի որ միջազգայնացած Հայկական հարցը կարող էր նորից հրապարակ իջնել և իրենք, հնարավոր է, ստիպված լինեն ճանաչելու հայերի որոշակի իրավունքներ: Այս տեսանկյունից Հայկական հարցի չեզոքացումը բխում էր նաև ռուսական կայսրության շահերից, ուստի վերջինիս կողմից հայ կամավորական շարժման նկատմամբ դրսևորած զգուշավոր-բացասական վերաբերմունքը, ռազմական տեսանկյունից չհիմնավորված նահանջները, հայ գաղթականների նկատմամբ ցուցաբերվող ոչ հոգատար վերաբերմունքը պատահական երևույթներ չէին:

Այդպիսով՝ ռուսական պետությունը ցանկանում էր վերացնել այն նախադրյալներն ու հիմքերը, որոնց վրա հենվելով՝ հայերը ապագայում հնարավորություն կունենային հանդես գալու քաղաքական հավակնություններով: Իհարկե, դա հայերի նկատմամբ նենգ քաղաքականություն էր: Բայց միաժամանակ ռուսական կողմը մոռանում էր, որ պատերազմի տվյալ՝

¹ Տե՛ս «Армянский вестник», М., 1916, № 5, 28 февраля, с. 15.

² Տե՛ս Мелкумян Г. А., Санитарное состояние города Эрзерума после взятия его русскими войсками в 1916 г., «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1974, 3 (40), էջ 23:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 110, թ. 2-3, Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 301-303:

⁴ Տե՛ս Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 303:

⁵ Մեր կարծիքով, Հ. Չավրիյանը Թիֆլիս վերադարձել է հուլիսի առաջին կեսին: Համենայն դեպս, իր գրառումները վկայում են, որ հունիսի 23-ին նա գտնվել է Լոնդոնում: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 84, թ. 6:

⁶ Հ. Չավրիյանին անցագրեր էին տվել Համառուսաստանյան քաղաքների միության գլխավոր կոմիտեն և Մոսկվայի հայկական կոմիտեն: Առաջինը՝ Երզրումի, Խնուսի, Մանսպեկերտի և Վանի, երկրորդը՝ Մուշի շրջանների համար: Բացի այդ, օգոստոսի 5-ին Երզրումի շրջանի ղեկավար Ե. Մաքսիմովը Հ. Չավրիյանին հատուկ անցագիր էր տվել, որով տեղամասերի ղեկավարներին կարգադրվում էր ամեն կերպ աջակցել նրան՝ գաղթականների վիճակին ծանոթանալու և միջոցներ ձեռնարկելու համար: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 81, թթ. 1-4:

⁷ Փաստաթղթեր Հ. Չավրիյանի, էջ 240:

բոլորի համար ծանր փուլում, հայերի և ռուսների համար կային ընդհանուր խնդիրներ և շահեր, որոնց լուծումն ու իրականացումը երկուսի համար էլ օգտակար էր: Այս միտքն էր փորձում ռուսական կողմին հասցնել Յ. Չավրիյանը՝ հանդես գալով մի քանի գործնական խնդիրների լուծման փոխշահավետ առաջարկներով:

Այս պայմաններում ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը՝ Յ. Չավրիյանը Երզրու-մի շրջանի կառավարիչ Եվգ. Մաքսիմովի և ռուսական կովկասյան բանակի թիկունքի պետ Ս. Տոմիլիսի միջոցով օգոստոսի 5-ին զեկույց-նամակով դիմում է Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Նիկոլայ Յուդենիչին: Երկու օրից հայ գաղթականների համար ստացվում է թույլտվություն¹՝ Երզնկայից եկող գաղթականներին՝ Երզրումի հովտում և հարակից գյուղերում, իսկ Մուշից եկողներին՝ Խնուս-Մանազկերտ-Բուլանըխի շրջաններում վերաբնակեցնելու համար²: Ընդ որում՝ հայտնի է, որ Ն. Յուդենիչի որոշմանը բացասական է արձագանքել պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված մարզերի ռազմական գեներալ-նահանգապետ, գեներալ Նիկոլայ Պեչկովը³:

Իր առաջարկները Յ. Չավրիյանը հիմնավորում էր նյութական միջոցների սղության և սանիտարական անվտանգության նկատառումներով նորեկ գաղթականներին Կովկաս ուղարկելու անթույլատրելիությամբ: Միաժամանակ, նա գաղթականների անվտանգությունն ապահովելու անհնարինության, ինչպես նաև շինությունների սակավության ու համաճարակների բռնկման հնարավորությամբ պայմանավորված աննպատակահարմար էր համարում նրանց թողնելը Երզնկայի ու Մամախաթունի շրջաններում կամ կուտակելը Երզրումում⁴:

Գաղթականները տեղավորվելու էին լքված գյուղերում և պարտավորվելու էին հնձել առատ բերքով լի հասունացած դաշտերը: Այնուհետև, նրանք անմիջապես պետք է սկսեին հնարավորին մեծ տարածքներում վար ու ցանք անելը (Ն. Յուդենիչի ցուցումով պետք է գլխավորապես գարի ցանեին): Ստացած բերքի կեսը նրանք հանձնելու էին գանձարան, սակայն, բացի իրենց բաժինը, պետությունը նրանց ապահովելու էր սերմնացուով⁵:

Հաշվի առնելով Բաբերդում և Երզնկայում հացահատիկի մեծ քանակությամբ չհնձված դաշտերի առկայությունը՝ Յ. Չավրիյանի առաջարկով գաղթական տղամարդկանց առանձին խմբերի հատկացվելու էին տեղամասեր, որտեղ նրանք պետք է հնձեին եղած բերքը: Նախատեսվում էր այդ աշխատանքում ներգրավել նաև Կովկասում հանգրվանած տղամարդ գաղթականներին՝ խոստանալով բերքի 2/3-ը⁶:

Զեին անտեսվում նաև գաղթական-կանայք: Նրանք բանակի պատվերով զինվորների համար պետք է կարեին ներքնազգեստ, գործեին բրոյա գուլպաներ և ձեռնոցներ: Քննարկելով քաղաքագլուխ Նոդայբեկովի առաջարկը՝ որոշվում է նաև ներքնազգեստ կարել զինվորների համար: Կանայք իրենց գործած իրերի կեսը պետք է հանձնեին կոմիսարիատին, իսկ մնացած կեսը պետք է մնար իրենց որպես աշխատանքի դիմաց վարձատրություն⁷: Արդյունքում, որբերի ու մերկ գաղթականների համար հագուստ և ներքնազգեստ կարելու նպատակով որոշվում է ստեղծել փոքրիկ արտադրամաս: Բայց ընդամենը մեկ կարի մեքենա ունենալու պատճառով աշխատանքը դանդաղում էր, ուստի Յ. Չավրիյանը փորձում է չափավոր գներով ձեռք բերել 5-10 կարի մեքենա⁸:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 231:

² Տե՛ս նույն տեղում, էջ 230:

³ Մասնավորապես, հայտնի է, որ Ն. Պեչկովը նյարդայնացած հայտարարել է, որ հրամանատարը նման թույլտվություն տալու իրավունք չունի: Սակայն նրա այս հայտարարությունը որևէ ներգործություն չի ունեցել: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 32 շրջ.:

⁴ Փաստաթղթեր Յ. Չավրիյանի, էջ 226:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 229

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 228:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 238-239:

⁸ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 82, թ. 20:

Անտեր մնացած գյուղերում հայ գաղթականների վերաբնակեցումը համակարգելու և իշխանությունների հետ նրանց փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով Հայկոբ Չավրիյանը մշակում և օգոստոսի 9-ին ռուսական իշխանությունների հետ համաձայնեցնում է 22 կետից բաղկացած «Հրահանգ գյուղերում վերաբնակեցվող հայ գաղթականների համար» վերտառությամբ փաստաթուղթը, ըստ որի՝ հայ գաղթականները կարող էին սերմնացան կատարել տեղամասի ղեկավարի թույլ տված բոլոր վայրերում: Հասունացած բերքով հացահատիկի դաշտերը տրվելու էին ոչ թե առանձին անհատների, այլ ամբողջ գյուղական համայնքին: Յուրաքանչյուր համայնք իր միջից ընտրելու էր ավագ և գրագիր, ովքեր վարելու էին բոլոր գործերը, գրագրությունը, կազմելու էին կոմիտեի¹ կողմից պահանջած հաշվետվությունները, ինչպես նաև իշխանությունների բոլոր հանձնարարությունները²: Կոմիտեի կողմից նշանակվում էր նաև շրջանի լիազորը, ով համակարգելու էր բոլոր գործերը և հետևելու գյուղական աշխատանքին: Այդ պետի լիազորությունների շրջանակը ընդգրկում էր տեղական վարչական և զինվորական իշխանությունների հետ շփումները, ընթացիկ գրագրությունը, ստացված բերքի հաշվարկն ու բաշխումը, շրջանի պետի և Հայկական կոմիտեի կողմից պահանջվող հաշվետվությունների կազմումը և այլն: Լիազորների կարևոր պարտականություններից էր նաև որբերի ու այրիների հայտնաբերումը³:

Հավելենք, որ աշխատում էին գաղթականներին բնակեցնել լեռնային շրջաններում, քանի որ այնտեղ հացահատիկն ավելի որակյալ էր, և ձմռանը ռուս զինվորների վերադառնալուց հետո նրանք նորից չէին տեղահանվի: Բացի այդ, պակաս կարևոր չէր գաղթականների կուտակումների վայրերում հաճախ հանդիպող վարակիչ հիվանդություններից նրանց զերծ պահելու հանգամանքը⁴:

Հ. Չավրիյանի կողմից ռուսական իշխանությունների առաջ բարձրացված հաջորդ կարևոր խնդիրը, Երզրումի հայերի՝ Ս. Աստվածածին եկեղեցում տարաներով կնքած վիճակում ի պահ տրված թանկարժեք իրերի, ունեցվածքի հարցն էր⁵, որ ռուսական բանակի քաղաք մտնելուց հետո սկսել էին դուրս բերել⁶: Թեև ռուսական իշխանությունները մի քանի անգամ գույքագրում էին կատարել, անգամ այդ գործին մասնակից դարձրել հայերին կոտորած և կողոպտած թուրքերի ներկայացուցիչների, բայց հայերին թույլ չէին տալիս մոտենալ իրենց գույքին: Տարածված լուրերի համաձայն՝ իշխանությունները ցանկանում են այդ գույքի մի մասը վերցնել հօգուտ բանակի, մյուսը՝ վաճառել աճուրդով⁷:

Գույքի հարցով Հ. Չավրիյանը Երզրումի հայկական համայնքի անունից օգոստոսի 18-ին դիմում է անմիջապես Կովկասյան բանակի հրամանատար Ն. Յուդենիչին: Նա ներկայացնում է, որ ռուսական բանակի կողմից Երզրումի գրավումից հետո հայերն ակնկալում էին, որ նշված գույքը կվերադարձվի իրենց, մասնավոր, որ տեղեկություններ կային, որ այդ գույքի տերերի մի մասը ողջ է ու հետաքրքրվում է իր ունեցվածքով:

Հ. Չավրիյանը գրում է, որ Երզրումի հայությունը կողմ է, որ բանակի կարիքների համար անհրաժեշտ այդ գույքի հատվածը վերցվի, սակայն շատ ցավալի և վիրավորական է համարում աճուրդի անցկացումը, ինչի արդյունքում հայերը կամ պետք է բարձր գնով գնեն

¹ Երզրումի կոմիտեն ստեղծվել է 1916 թ ապրիլին: Նրա նպատակը Երզրումի և շրջանի հայ բնակիչների, գաղթականների հոգևոր և նյութական կարիքների հոգումն էր, իրավունքների պաշտպանությունը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 4, թ. 68:

² Տե՛ս Փաստաթղթեր Հ. Չավրիյանի, էջ 234-235:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 30 շրջ. 31 շրջ.:

⁴ Տե՛ս Փաստաթղթեր Հ. Չավրիյանի, էջ 235:

⁵ Այդ գույքի արժեքը տարբեր տվյալներով գնահատվում էր 1 մլն ռուբլի («Արեւ», Բագու, 1916, № 28, օգոստոսի 7, էջ 14) կամ 6 մլն ֆրանկ (Եսթուս Ա., նշվ. աշխ., էջ 14): Ուշագրավ է նաև, որ թուրքերը մինչ 1916 թ. փետրվար չեն կողոպտել այն և նույնիսկ քաղաքը լքելիս այդ հարստությունները թողել են քաղաքում:

⁶ Մասնավորապես, հայտնի է, որ գեներալ Պ. Կալիտինը հայերի գույքը ֆուրգոններով դուրս է տարել: Նրա ատելությունը հայերի նկատմամբ ավելացել այն բանից հետո, երբ հայերն այդ առիթով բողոքի ձայն են բարձրացրել: Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ, էջ 90; Մարության Ա., Հայկական հարցը և Ռուսաստանի քաղաքականությունը (1915-1917 թթ.), Ե., 2003, էջ 238; «Армянский вестник», М., 1916, № 34, с. 4.

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 82, թ. 28:

իրենց իսկ գույքը կամ, որ ավելի վատ է, այն կգնեն հայերին կողոպտելու հետևանքով հարստացած թուրքերը: Նա խնդրում էր, բանակի կարիքների համար անհրաժեշտ հատվածը վերցնելուց հետո, գույքի մնացած մասը վերադարձնել ողջ մնացած տերերին¹:

Ինչպես Գևորգ Ե կաթողիկոսին հաղորդում էր Կարինի հայ փախստականների կոմիտեն, արդեն 1916 թ. օգոստոսի 20-ին տեղի կառավարությունը եկեղեցու մեջ եղած ապրանքները քննում է՝ զատելով զինվորականությանը պետք եղած ապրանքները²: Իսկ սեպտեմբերի վերջերից մնացած գույքը սկսում են բաժանել տերերին³: Այդ կապակցությամբ 1917 թ. փետրվարի 22-ին Չավեն վարդապետը Գևորգ Ե-ին տեղեկացնում է, որ վերջինիս հրամանի համաձայն մոտ օրերս ստացել է եկեղեցապատկան այն իրերը, որոնք հանվել են զինվորական վարչության ձեռքով և պահվել եկեղեցու խորանում գնդապետ Ն. Կեռստիչի⁴ հսկողության ներքո⁵:

Բացի նշվածը՝ Յ. Չավրիյանի ջանքերով դրական տեղաշարժեր են նկատվում հայ որբերի խնամքի և բժշկական ծառայության կազմակերպման գործերում: Բայց դրամական միջոցների սղության պատճառով ընթացք չեն ստանում գյուղատնտեսական գործիքների, անասունների ձեռքբերման հարցերը⁶:

Այսպիսով՝ բավականին արդյունավետ գործունեություն ծավալելուց հետո նույն թվականի սեպտեմբերին Թիֆլիս վերադարձած Յ. Չավրիյանը ամսի 12-ին Հայկական կենտրոնական կոմիտեի նիստում հանդես է գալիս Երզրումի շրջանի հայ գաղթականության վիճակի մասին զեկույցով, որը մեծ գոհունակությամբ է ընդունվում⁷:

Ամփոփելով Յ. Չավրիյանի Երզրումյան գործունեության արդյունքները՝ հարկ է նշել, որ նա բավականին կարճ ժամանակահատվածում նշանակալի դեր է կատարում Երզրումի շրջանի հայ բնակչության ու գաղթականների համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարցեր կարգավորելու, նրանց վիճակը բարելավելու և իրավունքները պաշտպանելու ուղղությամբ: Փաստերը վկայում են, որ ազգային կարևոր խնդիրների լուծումներ առաջարկելիս Յ. Չավրիյանը ցուցաբերել է դրանք ռուսական շահերի հետ համադրելու ուսանելի օրինակներ, իսկ հարկ եղած դեպքում կարողացել է կտրուկ հակազդեցությամբ

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 25-30:

² Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 110, թ. 17:

³ Վրաստանի և Իմերեթի հայոց թեմակալ առաջնորդ, եպիսկոպոս Մեսրոպ մագիստրոս Տեր-Մովսիսյանին ուղղած հեռագրում Ռոստոմը հայտնում էր. «Այսօր սկսեցին բաժանել տերերին հայոց եկեղեցում պահված ապրանքները» (Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի վերաշինության խնդիրը. Նորահայտ վավերագրեր Կարինում Ռոստոմի և հայ բարեգործական ընկերությունների 1916 թ. գործունեության վերաբերյալ, «ՎԷՄ», Ե., 2010, թիվ 4(32), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 196:

⁴ Կեռստիչ Ն.Գ (1871-1955): Պատերազմի շրջանում եղել է Կովկասյան ռազմական օկրուգի ռազմասանիտարական վարչության տարիանման բաժանմունքի պետ, 1915 թ. մայիսից՝ Կովկասյան բանակի մատակարարման պետի պաշտոնակատար, 1916 թ. հունիսից՝ Կովկասյան բանակի հրամանատարի՝ հանձնարարությունների համար զենքային պաշտոնակատար:

⁵ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 137, թ. 45:

⁶ Չավրիյանը օգոստոսի 10-ին հեռագրում է Ս. Մամիկոնյանին, որ 50000 ռուբլու առկայության դեպքում կարող է ձեռք բերել 1000 գլուխ անասուն: Պաշտոնական տվյալներով՝ անասունների ողջ գլխաբանակը առգրավվել էր փորքերի կողմից: (Տե՛ս ՅԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 16): Օգոստոսի 28-ին Ռոստոմին ուղղված հեռագրում Յ. Չավրիյանը նշում է Դրաստամատ Մարգարյանի հետ իր համաձայնության մասին՝ ինքնարժեքով 150 գլուխ անասուն ձեռք բերելու հետ կապված: Իսկ կոմիտեն պետք է վբաղվեր այն հարցով, թե ու՞ր պետք է ուղղվեին անասունները: Նույն հեռագրում Յ. Չավրիյանը Ռոստոմին տեղեկացնում է, որ Մաքսիմովը անասուն և հացահատիկ գնելու համար սկսել է իրեն փոխարինաբար տվել է 25.000 ռուբլի՝ հույս ունենալով, որ Ս. Մամիկոնյանը շուտով կվերադարձնի այդ գումարը, սակայն, երբ վերջինս չի արձագանքել Մաքսիմովի հեռագրին (տե՛ս ՅԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 532, թ. 1), նա իրենից հետ է վերցրել այդ գումարը: Ուշագրավ է, որ ժամանակի հայկական մամուլն արձագանքել է Մաքսիմովի կողմից 25.000 ռուբլի տրամադրելու մասին տեղեկությանը, սակայն նույն թերթերում այդ գումարը հետ վերցնելու մասին որևէ տեղեկություն չկա: Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1916, № 195, 2 սեպտեմբերի, էջ 3; «Աշխատանք», Ե., 1916, № 37, սեպտեմբերի 7, էջ 4, «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, № 42, սեպտեմբերի 11, էջ 14; «Армянский вестник», М., 1916, № 34, с. 19.

⁷ Տե՛ս «Армяне и война», Одесса, 1916, № 8, с. 123.

գսպել ռուսական կողմի հակահայկական տրամադրությունները և ստանալ ցանկալի որոշումներ¹: Համենայն դեպս, պայմանավորված այդ ժամանակաշրջանի ռուսական պետական շահերով, մասամբ էլ Հ. Չավրիյանի գործունեությամբ՝ թուրքասիրությամբ հայտնի Էրզրումի շրջանի պետ Վ. Մաքսիմովը սկսում է հետաքրքրվել հայ գաղթականների վիճակով, կենցաղով², իսկ բանակի հրամանատար Ն. Յուդենիչի սպայակույտում խոստանում են ցուցաբերել մշտական աջակցություն՝ հավաստիացնելով, որ հայերի նկատմամբ հակակրանք չունեն և այլն:

Բուսները բոլոր հարցերը սկսում են լուծել Հայկական կոմիտեի միջնորդությամբ: Հայ բնակչության կուտակման արդյունքում Էրզրումում աստիճանաբար ուրվագծվում է հայկական փոքրիկ ինքնուրույն մարմին, և իշխանության ներկայացուցիչները բոլոր հնարավոր գործերի հետ կապված Հայկական կոմիտեին սկսում են գրություններ հղել: Նրանք, հասկանալով և օգտագործելով ֆինանսական դժվար կացության մեջ գտնվող իրենց կայսրության բեռը թեթևացնելու հնարավորությունը, գոնե ժամանակավորապես զսպում են իրենց՝ ընդամաք զնալով Հ. Չավրիյանի առաջարկներին:

Կարծում ենք՝ Հ. Չավրիյանի Էրզրումյան գործունեությունն ի ցույց է դնում նրա մասշտաբային մտածողությունը, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելով՝ քաղաքականապես գրագետ ու ճիշտ որոշումներ առաջարկելու և դրանք իրագործելու ունակությունները: Նշված գործունեությունը մեծ դեր են կատարում հետագայում ռուսների կողմից նրան ավելի պատասխանատու պաշտոնի առաջադրելու գործում:

Եվ, վերջապես, ներկայացված տեսանկյունից հայ պատմագրության մեջ ընդգծված ռուսամետ գործչի հեղինակություն ունեցող Հ. Չավրիյանը Էրզրումում հանդես է գալիս նոր լույսի ներքո՝ իրեն դրսևորելով որպես հայ ազգային-պետական գործչի բարձր հատկանիշներ ունեցող անհատ:

Маняк Ераносян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.). Одной из важных задач, вставших перед армянством в период Первой мировой войны и Геноцида, было улучшение положения армян на завоеванных русскими войсками на Кавказском фронте армянских территориях, размещение беженцев, оказание им необходимой помощи и т.д.

Активную работу, направленную на решение этих задач, развернули армянские и российские общественные, благотворительные организации и политические силы. Неслучайно целый ряд деятелей армянских национальных партий в качестве представителей различных общественных организаций, занимающихся проблемами беженцев, прибывали в разные населенные пункты Западной Армении, берясь за организацию помощи армянскому населению и разрешение вопросов, имевших для них жизненно важное значение.

В данной статье представлена деятельность одного из них, Акопа Заврияна, развернутая им с конца июля до начала сентября 1916 г. Она была направлена на размещение и улучшение условий жизни армян Эрзрума и армянских беженцев.

¹ Օրինակ՝ հակահայկական տրամադրություններ ունեցող Մաքսիմովի օգնական Գ. Կուտուկովի հետ հայ գյուղացիներին գյուղերում վերաբնակեցնելու համար վկայականներ ստանալու հարցով տեղի ունեցած զրույցում Հ. Չավրիյանն այն միտքն է արտահայտում, թե ռուսական վարչակազմը ավելի վատն է, քան թուրքականը. վերջինս գոնե փորձում էր արդարացի երևալ, իսկ Կուտուկովը դիտավորյալ ձգձգում էր հարցի լուծումը: Ուշագրավ է, որ զրույցի հաջորդ օրը այդ վկայականը ստացվում է: Տե՛ս Փաստաթղթեր Հ. Չավրիյանի, էջ 232-233:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 8, թ. 13-13 շրջ.:

До прибытия в Эрзрум А.Завриян уже успел завоевать определенный авторитет и доверие в кругу государственно-политических деятелей России и некоторых стран Европы. Это обстоятельство сыграло существенную роль при урегулировании сложных вопросов, касавшихся положения армян.

Ключевые слова: А.Завриян, беженец, Эрзрумский район, российские власти, благотворительные организации, партии, переселение, Армянский комитет.

Manyak Yerososyan, HAKOB ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). One of the important tasks the Armenians were facing during the First World War and the Genocide was improving the situation of Armenians in the Armenian territories conquered by the Russian troops on the Caucasian Front, placing refugees, providing them with the necessary assistance, etc.

Armenian and Russian public, charitable organizations and political parties launched an active work aimed at solving these problems. It is not by chance that a number of leaders of the Armenian national parties, as representatives of various public organizations engaged in the problems of refugees, arrived in different settlements of Western Armenia, undertaking organization of assistance to the Armenian population and resolving issues that were of vital importance to them.

This article presents the activities of one of them, Hakob Zavriyan, which he developed from the end of July to the beginning of September 1916. It was aimed at accommodating and improving the living conditions of the Armenians of Erzurum, the Armenian refugees.

Before arriving in Erzurum, A. Zavriyan had already managed to gain a certain authority and trust in the circle of statesmen and politicians in Russia and some European countries. This circumstance played a significant role in the settlement of complex issues related to the situation of the Armenians.

Key words: A. Zavriyan, refugee, Erzurum region, Russian authorities, charitable organizations, parties, resettlement, Armenian Committee.